Հավելված
Գյումրի համայնքի «Նանուլիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ–ի
տնօրենի 2026 թվականի մարտի 17–ի N 13 հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Նանուլիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը) |
|---|---|---|---|---|
| 01 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Նանուլիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչ**<br>(0.5դրույք) | **1 ) Որակավորման պահանջները՝ նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝**<br>1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ.<br>2) Ընդհանրական պահանջները.<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝<br>1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2) իմանա սույն նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝ ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասի», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)դիմում (Ձև 1).<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ.<br>4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5)ինքնակենսագրություն.<br>6)մեկ լուսանկար՝3x4 չափի.<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |

<table>
<tr><td></td><td></td><td>«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը. բ. նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի, անատոմիայի, մարզագործիքների վրա ուսուցման մեթոդիկայի հիմունքներին:</td><td></td><td>Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:</td></tr>
<tr><td colspan="2">Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը</td><td colspan="2">Դիմումների և փաստաթղթերի ընդունումը</td><td>Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները</td></tr>
<tr><td colspan="2">Վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու համայնքապետարան 3–րդ հարկ, նիստերի դահլիճ<br>օրը՝ 2026 թվականի ապրիլի 20-ին, ժամը՝ 11-00-ին</td><td colspan="2">Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրի համայնքի «Նանուլիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (հեռ. 077389420): Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբերի 2024 թվական<br>N1981 - Ա/2 հրաման):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:</td><td>2026 թվականի ապրիլի 13-ը ներառյալ</td></tr>
</table>